ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2019 թվականի N 18

ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ

ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Աշոտ Վարդանյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Փոփոխել Աշոտ Սուրենի Վարդանյանին պատկանող թիվ 23102019-06-0024 վկայականի անշարժ գույքի /ծածկագիր 06-026-007-007/ հասցեն՝

ՀՀ ԼՄ Անտառաշեն համայնք, 2 փողոց, 1 նրբ.թիվ 2 – ի փոխարեն գրել

ՀՀ ԼՄ Անտառաշեն համայնք, 1 փողոց, թիվ 10/3 :

2.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ռ.Խաչատյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2019 թվականի N 19

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՅՈՒԼԲԵԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42 և 43 հոդվածիներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածով, ՀՀ կառավարության 18.05.2006 թ-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքով, հիմք ընդունելով հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, անշարժ գույքի համար կազմված հատակագծերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել ՀՀ ԼՄ Անտառաշեն համայնքի 1փ. թիվ 71 հասցեում գտնվող 06-026-0013-0004 ծածկագրով 0.03063 հա բնակելի տանը կից հողամասում ինքնակամ կառուցված 80.7քմ արտաքին մակերեսով շինությունը և ճանաչել Հովհաննես Գյուլբեկյանի սեփականության իրավունքը:
2. Վերը նշված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն իրժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար 26631 դրամ 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Խառատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 20

ԱՆՏԱՌԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաշվի առնելով, որ Անտառաշեն համայնքի բյուջեում առկա է տնտեսված գումար և նկատի ունենալով աշխատակիցների ծառայողական պարտականությունների պատշաճ կատարումը Անտառաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին պարգևատրել՝ յուրաքանչյուրին մեկ ամսվա աշխատավարձի 80%-ի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2019 թվականի N 21-Ն

ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ-Ի ՃՇՏՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն "ՀՀ բյուջետային համակարգի մասին" օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Անտառաշեն համայնքի ավագանու 25,12,2019 թ-ի թիվ 23-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաստատել համայնքի 2020 թ-ի ճշտված բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ռ.ԽԱՌԱՏՅԱՆ**